



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 1186-Ա/Ք

«27» 10 2011թ.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3109 «ՁԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՁԿԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի N 8 արձանագրային որոշման 14-րդ՝ «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին ու գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» կետը, ՀՀ ԿԳ նախարարի 2009թ. մայիսի 12-ի «Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և ուսումնամեթոդական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տալու նպատակով ստեղծվող ոլորտային հանձնաժողովների կազմը՝ ըստ մասնագիտական խմբերի հաստատելու մասին» N 445-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկաբուծություն» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:

2. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկաբուծություն» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկման նպատակով ուսումնական հաստատություններում ներդնել 2012թ. սեպտեմբերի 1-ից:
3. Նախարարության աշխատակազմի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությանը մինչև 2011 թվականի դեկտեմբերի 30-ը հաստատման ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը, որոնցում փորձարկման նպատակով ներդրվելու է 3109 «Ձկնաբանություն և ձկաբուծություն» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը:
4. Կրթության ազգային ինստիտուտի տնօրենին /Ն. Ղուկասյան/ ապահովել չափորոշիչի փորձարկման ընթացքի վերաբերյալ ուսումնական հաստատություններից վերլուծական հաշվետվությունների ստացումը:
5. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:



Ա. ԱՇՈՏՅԱՆ

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3109 «ՁԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչը սահմանում է միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության՝ Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի «Ձկնաբուծ» որակավորմանը ներկայացվող պահանջները, հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսանողների ուսումնական բեռնվաճառության նվազագույն և առավելագույն ծավալները:

2. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել ուսուցման հետևյալ ձևերով՝

- 1) առկա,
- 2) հեռակա,
- 3) դրսեկություն (էքստենսատ),
- 4) հեռավար (դիստանցիոն):

3. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

- 1) կրթության առկա ձևով.
 - ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 2 տարի,
 - բ. հիմնական կրթության հիմքով՝ 3 տարի.
- 2) կրթության հեռակա ձևով.
 - ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 3 տարի.

3) դրսեկության (էքստենսատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով՝ կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստենսատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշման:

4. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվաճառության նվազագույն ծավալը 2808 ժամ է, առավելագույն ծավալը՝ 4644 ժամ: Հիմնական կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3109 «ՁԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԿՆԱԲՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

- 1) տեխնիկ- ձկնաբույծ,
- 2) ավագ տեխնիկ-ձկնաբույծ:

7. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտությամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.

- 1) ձկների և ջրային այլ օրգանիզմների կենսամիջավայրի բարենպաստ պայմանների ստեղծելն ու վերահսկելը,
- 2) ձկների և ջրային այլ օրգանիզմների վերարտադրելն ու աճեցնելը,
- 3) ձկների և ջրային այլ օրգանիզմների կերակրման կազմակերպելը,
- 4) ձկների և ջրային այլ օրգանիզմների առողջական վիճակին հետևելը և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներ իրականացնելը,
- 5) ակվարիումային օրգանիզմների խնամելն ու բազմացնելը,
- 6) ձկնաբուծության ոլորտում ծառայություններ մատուցելը,
- 7) տեսական գիտելիքներն ու գործնական կարողությունները աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները բացահայտելու և լուծելու համար կիրառելը,
- 8) այլ աշխատողների ղեկավարելը,
- 9) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

ԳԼՈՒԽ 3.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3109 «ՁԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԿՆԱԲՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանվում են շրջանավարտին ներկայացվող ընդհանուր պահանջների համաձայն:

9. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է՝

- 1) ունենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական ու գործնական գիտելիքներ,
- 2) դրսևորի աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում գործընկերների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողություն,
- 3) ունենա որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն,
- 4) դրսևորի մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ դիտարկելու, ինչպես նաև քաղաքացիական գիտակցություն ցուցաբերելու կարողություն,
- 5) ունենա մասնագիտական գործունեության գործառույթները սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու հմտություններ,

6) ցուցաբերի իր և աշխատակիցների մասնագիտական կարիքները գնահատելու և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարողություն,

7) ունենա մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն,

8) ցուցաբերի մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, դրանցից օգտվելու և դրանք նպատակային օգտագործելու կամ փոխանցելու կարողություն,

9) ունենա աշխատակիցների աշխատանքները կազմակերպելու կամ գործընկերային հարաբերությունները, ըստ կարողությունների և մասնագիտացման համակարգելու հմտություններ,

10) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերի ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողություն:

ԳԼՈՒԽ 4.

3109 «ՁԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում են ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների, առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն:

11. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է՝

1) իմանա ՀՀ Սահմանադրության, զբաղվածության տվյալ բնագավառը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,

2) տիրապետի հայոց լեզվին,

3) հաղորդակցվի առնվազն երկու օտար լեզուներով,

4) տիրապետի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին,

5) գիտելիքներ ունենա ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի վերաբերյալ,

6) ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,

7) ցուցաբերի կիրառական տնտեսագիտության հիմնադրույթների, մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքների, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունների իմացություն:

8) իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությունը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթները,

9) պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքին և ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 1-ում բերված մոդուլներով սահմանված առանցքային հմտություններին:

13. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 2-ում բերված մոդուլներով ըստ մասնագիտացումների սահմանված ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողություններին:

ԳԼՈՒԽ 5.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3109 «ՁԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՁՆԵՐ

14. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,

2) ուսումնական պրակտիկան վարող դասախոսը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն:

3) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացների դասախոսները:

15. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցներ:

16. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի: Դրանց հագեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. Ձկնաբուծական աշխատանքների պլանավորման և կազմակերպման

բ. Անողնաշարավորների կենդանաբանության և ձկնաբանության

գ. Ջրաբանության և ջրակենսաբանության

դ. Ձկնային տնտեսությունների կառուցվածքի և արտադրական գործընթացների

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

ա. Ձկնաբուծության

բ. Ջրաքիմիական անալիզի

գ. Ձկնաբուծական տեխնիկական միջոցների

3) Ուսումնական արհեստանոցներ՝

ա. Ձկնաբուծական տեխնիկական միջոցների վերանորոգման

բ. Ակվարիումային տնտեսություն

4) Ուսումնական ձկնաբուծարան

5) Սպորտային համալիր՝

ա. մարզադահլիճ

բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) առկա ուսուցման ձևի համար ուսումնական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն է, իսկ հեռակա, դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերի համար սահմանվում է ուսումնական պլաններով,

2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,

3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերազանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,

4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,

5) հեռակա ուսուցման ձևի դեպքում ուսանողների հետ պարտադիր պարապմունքների տարեկան ծավալն առնվազն 160 ժամ է,

6) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամը,

7) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և (կամ) առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաներ,

2) պրակտիկայի յուրաքանչյուր տեսակի տևողությունը սույն չափորոշչով սահմանված պրակտիկայի ընդհանուր տևողությանը համապատասխան սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով,

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում է ուսումնական հաստատությունը.

4) ուսումնական պրակտիկաներն անցկացվում են պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում,

5) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնառության ընթացքում բոլոր ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակը՝ ըստ սույն չափորոշչով սահմանված կարողությունների տարրերի նրանց ձեռքբերումները հավաստող վկայություններ ստանալն է,

2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին,

3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով,

4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգել շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշչով 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության մասնագետի համար սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 6.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3109 «ՁԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու համար հաստատությունը կազմում և հաստատում է առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների, ընտրովի դասընթացի ուսումնական ծրագրերը, կրթության կառավարման պետական լիազորված մարմնի երաշխավորած ձևին համապատասխան ուսումնական պլանը՝ հաշվի առնելով 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը:

21. Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

1) կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները,

2) պետք է մոդուլների արդյունքներին և դրանց կատարման չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերը մշակելիս հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

3) պետք է առարկայի և (կամ) մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

4) պետք է միջանկյալ ատեստավորման ընդհանուր շաբաթների սահմաններում որոշի ըստ կիսամյակների այս ատեստավորմանը հատկացվող ժամանակը,

5) պետք է մասնագիտության նկարագրին համապատասխան տվյալ որակավորման ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով՝ կազմի և հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը,

6) օգտվելով երաշխավորված ձևում տրված պարզաբանումներից՝ պետք է կազմի ուսումնական պլանի կիրառման պարզաբանումները,

7) պետք է պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշի ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

8) պետք է սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը:

Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԳՀ-5-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Փնտրել և գտնել աշխատանք
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները բ. կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղը(երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV) դ. ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը, ե. ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը
Ուսումնառության արդյունք 2	Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները բ. հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը գ. ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ, դ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ, ե. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:

Ուսումնառության արդյունք 3	Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը</p> <p>բ. ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները,</p> <p>գ. դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման</p> <p>ե. առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում</p> <p>զ. կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:</p>
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները
Կատարման չափանիշներ	<p>ա. բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում</p> <p>բ. բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում</p> <p>գ. բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում</p> <p>դ. ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-5-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար,</p> <p>բ. ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները,</p> <p>գ. ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները,</p> <p>դ. շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,</p>

	ե. անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
	ա. ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը բ. բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին գ. հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, դ. ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է ե. մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը
Ուսումնառության արդյունք 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
	ա. ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը բ. կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան գ. օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար դ. կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի ե. վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր զ. բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի է. գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի
Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
Կատարման չափանիշներ	ա. նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հաստեատիրոջ բ. ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը գ. առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար ե. ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ զ. պահպանում և եզրափակում է երկխոսությունը դ. կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները
Ուսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
	ա. ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն) բ. հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը գ. հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար

	<p>ե. հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն</p> <p>զ. ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-5-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ
	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը</p> <p>բ. ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները՝</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները</p> <p>է. ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները</p>
Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
Կատարման չափանիշներ	<p>ա. ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էպիտիկական, սոցիալական-հոգեբանական)</p> <p>բ. ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն)</p> <p>գ. ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,</p> <p>դ. ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները</p>
Ուսումնառության արդյունք 3	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
Կատարման չափանիշներ	<p>ա. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները</p> <p>բ. ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները</p> <p>գ. ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները</p>

	դ. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
Կատարման չափանիշներ	ա. տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին բ. առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում, գ. կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն դ. կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն ե. կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ զ. կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում, է. ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-5-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
Կատարման չափանիշներ	ա. տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին բ. տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին, գ. տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն) դ. ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը, ե. ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office), զ. կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը, է. օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,

	ը. ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ , պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում թ. կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print)
Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, բ. մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, գ. կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, դ. կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից, ե. կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն,
Ուսումնառության արդյունք 3	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք բ. կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ, գ. կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն) դ. փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում, զ. ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ
Ուսումնառության արդյունք 4	Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում
Կատարման չափանիշներ	ա. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ, բ. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, գ. գծագրում է կանոնավոր պատկերներ, դ. ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, ե. խմբավորում է գրաֆիկական օբյեկտները, զ. գծագրում է տեքստային բլոկներ, է. կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում
Ուսումնառության արդյունք 5	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը, բ. մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ, գ. ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, դ. կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար ե. ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը

Ուսումնառության արդյունք 6	Համացանցում աշխատելու իմացություն
Կատարման չափանիշներ	<p>ա. ներկայացնում է « համացանց » հասկացությունը,</p> <p>բ. օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը,</p> <p>գ. ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը,</p> <p>դ. փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),</p> <p>ե. կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները</p> <p>զ. գրանցվում է էլեկտրոնային փոստում , ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում</p> <p>է. օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացի (հաղորդագրություն, նամակ և կցորդ)</p>

Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՋՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ- 5-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ բնական ջրերի և նրանցում ընթացող երևույթների ու գործընթացների մասին, ջրերի պահպանության, ռացիոնալ օգտագործման, ինչպես նաև ձկնաբուծության և ձկնաբուծական ոլորտում մասնագիտությունների կատարման և դրանք ձկնաբուծական նպատակներով օգտագործման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ջրաբանության և օդերևութաբանության հիմնական հասկացությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ջրոլորտը և նրա բաղադրիչները, բ. ճիշտ է ներկայացնում մթնոլորտի կազմը և կառուցվածքը, գ. ճիշտ է ներկայացնում արևի ճառագայթման դերը օդի ջերմաստիճանի ձևավորման համար, դ. ճիշտ է կատարում օդի ջերմաստիճանի չափումները, ճանաչում է տարբեր կառուցվածքի ջերմաչափերի տիպերը և դրանց օգտագործման առանձնահատկությունները, ե. ճիշտ է ներկայացնում օդի խոնավության ցուցանիշները և չափման եղանակները, ճիշտ է չափում օդի խոնավությունը, զ. ճիշտ է ներկայացնում մթնոլորտային ճնշման երևույթը և չափման եղանակները, ճիշտ է չափում մթնոլորտային ճնշումը, է. ճիշտ է ներկայացնում մթնոլորտի շրջանառության երևույթները, քամիների առաջացումը, ճիշտ է կիրառում հողմացույցներն ու հողմաչափերը, ը. առաջադրված հանձնարարականի հիման վրա ճիշտ է կառուցում և մեկնաբանում տվյալ տեղանքի հողմավարդակը:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել բնական ջրերի հատկությունները և բնութագրիչները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բնական ջրերի ֆիզիկական հատկությունները՝ խտությունը, տեսակարար զանգվածը, եռման և սառցակալման ջերմաստիճանները, բ. ճիշտ է ներկայացնում ջրի ջերմունակության և ջերմահաղորդականության երևույթները, գ. ճիշտ է ներկայացնում ջրի ճնշման երևույթը և դրա ազդեցությունը ջրային օրգանիզմների վրա:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ծովային, աղահամ և անուշահամ ջրերի աղային կազմը, բնական ջրերի դասակարգումն՝ ըստ հանքայնացման
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ծովային, աղահամ և անուշահամ ջրերի աղային կազմի տարբերությունները, աղիության ու

	<p>հանքայնացման արտահայտումը համապատասխան միավորներով, բ. ճիշտ է ներկայացնում ջրի առավելագույն խտության և սառցակալման ջերմաստիճանը, գ. ճիշտ է ներկայացնում Հայաստանի հիմնական լճերի, գետերի և աղբյուրների հանքայնացման բնութագրերը:</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՈՂՆԱՇԱՐԱՎՈՐՆԵՐԻ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԿԱՌՈՍՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿԵՆՍԱՔԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՃՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ -5-11-002
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ անողնաշարավոր կենդանիների կարգաբանության, կառուցվածքի և կենսաբանական առանձնահատկությունների մասին, ինչպես նաև ձևավորել ձկնաբուծության համար հետաքրքրություն ներկայացնող անողնաշարավոր կենդանիներին որոշելու ու բուծելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել անողնաշարավոր կենդանիների կարգաբանությունը, կառուցվածքային և կենսաբանական առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում անողնաշարավոր կենդանիների դասակարգման հիմնական սկզբունքները և կարգաբանական հիմնական խմբերը (սարկոմաստիգոֆորներ, ապիկոմպլեքսներ, միկրոսպորիդներ, միքսոսպորիդներ, ինֆուզորիաներ, սպունգներ, աղեխորշավորներ, տափակ, կլոր և օղակավոր որդեր, փափկամորթներ, հողվածոտանիներ, փշամորթներ), բ. ճիշտ է ներկայացնում միաբջջի և բազմաբջջի կենդանիների կառուցվածքային առանձնահատկություններն՝ ըստ տիպերի, գ. ճիշտ է ներկայացնում ձկների մակաբույժ կամ նրանց համար վտանգ ներկայացնող անողնաշարավոր կենդանիների կառուցվածքային և կենսաբանական առանձնահատկությունները, դ. ճիշտ է ներկայացնում ձկների սնունդ հանդիսացող անողնաշարավոր կենդանիների կառուցվածքային և կենսաբանական առանձնահատկությունները, ե. ճիշտ է ներկայացնում անողնաշարավոր կենդանիների նշանակությունը ձկների կյանքում և ձկնային տնտեսության մեջ:</p>
Ուսումնառության արդյունք 2	Որոշել և բուծել ձկնաբուծության համար հետաքրքրություն ներկայացնող անողնաշարավոր կենդանիներին
Կատարման չափանիշներ	<p>ա. որոշիչների օգնությամբ ճիշտ է որոշում ջրակալներում հանդիպող անողնաշարավոր կենդանիների կարգաբանական պատկանելությունը և ճիշտ է բնորոշում է ջրակալներում նրանց կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունները, բ. ճիշտ է որոշում ձկների համար սնունդ հանդիսացող անողնաշարավորների ցեղային և (կամ) տեսակային պատկանելությունը, գ. ճիշտ է որոշում ձկների համար վտանգ ներկայացնող ջրային անողնաշարավորների ցեղային և (կամ) տեսակային պատկանելությունը, դ. արհեստական պայմաններում բուծում է ձկների համար կեր հանդիսացող անողնաշարավոր կենդանիներ:</p>

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԶԿՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՐԱՖԻԶԻԿԱ ԵՎ ԶՐԱՔԻՄԻԱ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ -5-11-003
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ բնական ջրերի՝ որպես ջրային օրգանիզմների կենսամիջավայրի, քիմիական հատկությունների, դրանց ձևավորման և փոփոխականության մասին, ինչպես նաև ձևավորել ջրի ֆիզիկական ու քիմիական հատկությունների վերլուծական ուսումնասիրության կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-11-001 «Զրաբանության» և ՁԿԲ 5-11-002 «Անողնաշարավորների կենդանաբանություն» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բացատրել ջրերի ֆիզիկական և քիմիական ռեժիմի հիմնական կենսական պայմաններն ու բնութագրիչները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բնական ջրերի ջերմաստիճանի նշանակությունը ջրային օրգանիզմների համար, բ. ճիշտ է ներկայացնում ջրի թափանցելիության նշանակությունը ջրային օրգանիզմների համար, գ. ճիշտ է ներկայացնում ջրի գազային ռեժիմի նշանակությունը ջրային օրգանիզմների համար, դ. ճիշտ է ներկայացնում ջրային օրգանիզմների՝ լուծված թթվածնի պահանջարկը և դրա անբավարարության հետևանքները, ե. ճիշտ է ներկայացնում ջրում լուծված ածխաթթվի նշանակությունը ջրային օրգանիզմների համար, զ. ճիշտ է ներկայացնում լուծված ազոտի տարբեր ձևերի նշանակությունը ջրային օրգանիզմների համար, է. ճիշտ է ներկայացնում լուծված ֆոսֆորի, երկաթի, միկրոտարրերի նշանակությունը ջրային օրգանիզմների համար, ը. ճիշտ է ներկայացնում ջրում լուծված օրգանական նյութերի տեսակները, ֆոտոսինթեզի դերը ջրակալների կյանքում:
Ուսումնառության արդյունք 2	Կիրառել վերլուծական քիմիայի հիմնական սկզբունքները և մեթոդները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում որակական և քանակական վերլուծության իմաստն ու մոտեցումները, բ. ճիշտ է ներկայացնում վերլուծական քիմիայի բնագավառները, գ. ճիշտ է ներկայացնում և կիրառում վերլուծական քիմիայի ժամանակակից մեթոդները, դ. ճիշտ է ներկայացնում քիմիական լաբորատորիաներում աշխատանքի անվտանգության կանոնները:
Ուսումնառության արդյունք 3	Որոշել ջրի ֆիզիկական հատկությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կատարում ջրի և օդի ջերմաստիճանների որոշումը սնդիկային և էլեկտրական ջերմաչափերով, բ. ճիշտ է կատարում ջրի թափանցելիությունը Սեկկիի սկավառակի և ֆոտոչափական սարքի օգնությամբ, գ. ճիշտ է որոշում ջրի գունավորումը չափանմուշային եղանակով, դ. ճիշտ է ներկայացնում և կիրառում ջրի համի և հոտի որոշման եղանակները:

Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «ԶՐԱԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ -5-11-004
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ջրոլորտի և նրա բնակիչների ընդհանուր բնութագրի, ջրային միջավայրի ու նրանում բնակվող օրգանիզմների համակեցությունների փոխհարաբերությունների մասին, ինչպես նաև ձևավորել մանրադիտակային և այլ տեխնիկայով աշխատելու, ջրակենսաբանական ուսումնասիրությունների իրականացման, փորձանմուշների հավաքելու, դրանք մշակելու ու գնահատելու, ջրային օրգանիզմների տեսակային կազմը որոշելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-11-003 «Ձկնատնտեսական ջրաֆիզիկա և ջրաքիմիա» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ջրոլորտի և նրանում ընթացող կենսաբանական գործընթացների ընդհանուր բնութագիրը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կիրառում ջրակենսաբանության հիմնական եզրույթներն և ներկայացնում դրանց բացատրությունները, բ. ճիշտ է ներկայացնում ջրակալներում ընթացող կենսաբանական գործընթացների ընդհանուր օրինաչափությունները, գ. ճիշտ է ներկայացնում ջրակալների արդյունավետության (պրոդուկտիվության) բնութագիրը, դ. ճիշտ է ներկայացնում արհուտիկ (ոչ կենսական) գործոնների ազդեցությունը ջրային օրգանիզմների համակեցությունների վրա:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ջրային օրգանիզմների նկարագիրը և նրանց համակեցությունների փոխհարաբերությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ջրակալներում տարածված մանրէների, ստորակարգ ու բարձրակարգ բույսերի և անողնաշարավոր ու ողնաշարավոր կենդանիների (բացի ձկներից) տեսակային կազմը և պոպուլյացիոն կառուցվածքը, բ. ճիշտ է ներկայացնում ջրային օրգանիզմների հարմարվողականության (ադապտացիայի) սկզբունքները, գ. ճիշտ է ներկայացնում ջրային օրգանիզմների սննդային փոխհարաբերությունները, դ. ճիշտ է ներկայացնում ջրակենսաբանական կեցությունները, ջրաէկոհամակարգերը և դրանց ռացիոնալ օգտագործման էկոլոգիական հիմունքները, ե. ճիշտ է ներկայացնում ջրակալների ջրաէկոհամակարգերի և ջրակենսաբանական կեցությունների օգտագործման հնարավորությունները ձկնաբուծական նպատակներով:
Ուսումնառության արդյունք 3	Իրականացնել ջրակենսաբանական ուսումնասիրություններ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կատարում ջրակենսաբանական փորձանմուշների հավաքը, բ. ճիշտ է օգտվում մանրադիտակային և այլ տեխնիկայից, գ. ճիշտ է կիրառում ջրակենսաբանական ուսումնասիրման մեթոդները, դ. ճիշտ է իրականացնում ջրակենսաբանական փորձանմուշների քանակական և որակական մշակումը, ստացված

	արդյունքների գնահատումը, ե. ճիշտ է որոշում ջրային օրգանիզմների տեսակային կազմը որոշիչներով:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ -5-11-005
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ձկների կառուցվածքային առանձնահատկությունների, ֆիզիոլոգիայի, աճի, բուսականության, սննդառության, բազմացման, կարգաբանության մասին, ինչպես նաև ձկնաբույժական ձկների արտաքին և ներքին օրգանները տարբերակելու, տարիքը որոշելու, աճի և սննդառության առանձնահատկությունները պարզաբանելու, բուսականության և սեռահատկության աստիճանը որոշելու, որոշիչների միջոցով ձկան տեսակային պատկանելությունը որոշելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-11-004 «Ջրակենսաբանություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ձկների անատոմիական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և տարբերակել նրանց արտաքին ու ներքին օրգանները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ձկների արտաքին կառուցվածքը, բ. ճիշտ է կատարում հերձման գործողությունները ձկան մարմնի վրա՝ առանձնացնելով և ճիշտ անվանելով ձկան հիմնական ներքին օրգանները, կմախքի միավորները, մկանունքը գ. ճիշտ է ներկայացնում ձկների շնչառության, արյան շրջանառության, մարսողության, արտաթորության գործընթացները, արտաքին գրգռիչներին պատասխանելու վարքագծային դրսևորումները:
Ուսումնառության արդյունք 2	Որոշել ձկների տարիքը և աճը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ձկան տարիքի որոշման մեթոդները և ձկների տարիքային փոփոխականության օրինաչափությունները, բ. ճիշտ է ներկայացնում ձկների աճի հիմնական փուլերը, գ. ճիշտ է ներկայացնում ձկների աճի վրա ազդող հիմնական գործոնները, դ. ճիշտ է որոշում ձկների քաշային և գծային աճը, աճի տեմպը, աճի հարաբերական արագությունը:
Ուսումնառության արդյունք 3	Որոշել ձկների սննդառությունը և բուսականությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ձկների սնունդ հանդիսացող օրգանիզմների խմբերը և դրանց հիմնական ներկայացուցիչներին բ. ճիշտ է ներկայացնում ձկների խմբերն՝ ըստ սննդառության տիպերի և սննդառության օբյեկտների, գ. ճիշտ է ներկայացնում ձկների սննդառության տարիքային և սեզոնային առանձնահատկությունները, դ. ճիշտ է ներկայացնում ձկների սննդառության կախվածությունը ապրելավայրի առանձնահատկություններից և սեռական պատկանելությունից,

	<p>ե. ճիշտ է կիրառում ձևերի սննդառության ինտենսիվության, սննդի օբյեկտների ընտրողականության, սննդային նմանության դասիչի և կերաբաժինների (ռացիոն) որոշման հաշվարկային մեթոդները</p> <p>զ. ճիշտ է որոշում ձկան բուլավաթությունը:</p>
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ձկների բազմացման և զարգացման ընդհանուր օրինաչափությունները և որոշել ձկների հասունության աստիճանը և բեղունությունը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ձկների կենսափուլերը, բազմացման ձևերը և ձվադրավայրերը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում սեռահասունության ժամկետները և կյանքի տևողությունը տարբեր ձկնատեսակների մոտ,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում տարբեր ձկնատեսակների բազմացման ժամկետները և բազմացման վրա ազդող գործոնները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ձկների սեռական գեղձերի կառուցվածքային առանձնահատկությունները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում սեռական գեղձերի հասունացման, ձկնկիթի բեղմնավորման և զարգացման գործընթացը,</p> <p>զ. ճիշտ է որոշում ձկների սեռական հասունության աստիճանը,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում ձկների բեղունության վրա ազդող գործոնները և որոշում ձկան անհատական, հարաբերական և աշխատանքային բեղունությունը,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում ձկների անհատական զարգացման սաղմնային և հետսաղմնային փուլերը և դրանց բնութագրական հատկանիշները:</p>
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել ձկների կարգաբանության ընդհանուր սկզբունքները և որոշել ձկան տեսակային պատկանելությունը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ձկների կարգաբանության հիմնական սկզբունքները և կարգաբանական հիմնական խմբերը,</p> <p>բ. ճիշտ է տարբերակում ձկների կարգերն ու ընտանիքներն՝ ըստ կառուցվածքային առանձնահատկությունների,</p> <p>գ. ճիշտ է իրականացնում ձկների տեսակային պատկանելության որոշումը:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԿՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ -5-11-006
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ձկների և արտաքին միջավայրի ոչ կենսածին և կենսածին գործոնների փոխհարաբերությունների, ձկների վտանգների դինամիկայի, կենսաձևի բնութագրական հատկանիշների, մարդու կյանքում ձկների նշանակության, ջրակալների ձկնարդյունավետության բարձրացման կենսաբանական հիմքերի ու պահպանության խնդիրների մասին, ինչպես նաև ձևավորել էկոլոգիական խնդիրների լուծման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-11-005 «Ձկնաբանություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ձկների և արտաքին միջավայրի ոչ կենսածին գործոնների փոխհարաբերությունները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ձկների մարմնի ու շարժման ձևերը՝ կախված ջրի ֆիզիկական հատկություններից,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում լույսի, ձայնի, էլեկտրական հոսանքի, էլեկտրամագնիսական տատանումների նշանակությունը</p>

	<p>ձկների կյանքում, գ. ճիշտ է ներկայացնում ջրի ջերմաստիճանի նշանակությունը ձկների կյանքում, դ. ճիշտ է ներկայացնում ջրի աղային կազմի, ջրում լուծված գազերի նշանակությունը ձկների կյանքում, ե. ճիշտ է օգտագործում ձկների և արտաքին միջավայրի ոչ կենսածին գործոնների փոխհարաբերություններին վերաբերող եզրույթներն ու տալիս դրանց սահմանումները:</p>
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ձկների և արտաքին միջավայրի կենսածին գործոնների փոխհարաբերությունները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ձկների ներտեսակային կապերն ու փոխհարաբերությունները, բ. ճիշտ է ներկայացնում ձկների միջտեսակային կապերն ու փոխհարաբերությունները, գ. ճիշտ է ներկայացնում ձկների և այլ օրգանիզմների (բակտերիաներ, վիրուսներ, սնկեր, բույսեր, կենդանիներ) կապերն ու փոխհարաբերությունները:</p>
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ձկների կյանքի հիմնական օղակները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ձկների բազմացման ու զարգացման ընդհանուր օրինաչափությունները, սեռական երկձևությունը, սեռերի հարաբերակցությունը վտառներում, ձկների խնամքը սերնդի նկատմամբ, կենդանածնության և ձվակենդանածնության ընդունակությունը, բ. ճիշտ է ներկայացնում ձկների չափերի և աճի ընդհանուր օրինաչափությունները. գ. ճիշտ է ներկայացնում ձկների պոպուլյացիաների տարիքային կազմը, դ. ճիշտ է ներկայացնում ձկների վտառների դինամիկան, ե. ճիշտ է ներկայացնում ձկների միգրացիաների (չուերի) տեսակները և դրանց կենսաբանական նշանակությունը, զ. ճիշտ է ներկայացնում ձկների օրական կենսակերպը, է. ճիշտ է ներկայացնում ձկների ծմեռելու և քուն մտնելու կենսաբանական նշանակությունը, ը. ճիշտ է ներկայացնում ձկների սնվելու առանձնահատկությունները և սննդային փոխհարաբերությունները:</p>
Ուսումնառության արդյունք 4	Բացատրել մարդու կյանքում ձկների նշանակությունը և ջրակալների ձկնարդյունավետության բարձրացման կենսաբանական հիմքերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ձկների նշանակությունը մարդու կյանքում՝ որպես սննդի աղբյուր, բ. ճիշտ է ներկայացնում սպորտային և սիրողական ձկնորսությունը՝ որպես մարդու հանգստի կազմակերպման աղբյուր, գ. ճիշտ է ներկայացնում ջրակալների ձկնարդյունավետության բարձրացման և ձկնային տնտեսությունների հիմնադրման կենսաբանական հիմքերը, դ. ճիշտ է ներկայացնում ձկների կլիմայավարժեցման էությունը և առանձնահատկությունները տարբեր տիպի ջրակալներում ու ձկնային տնտեսություններում, ե. ճիշտ է ներկայացնում ջրակալների ռացիոնալ օգտագործման և պահպանության էկոլոգիական խնդիրները և հնարավոր լուծումներ է առաջարկում այդ խնդիրները լուծելու ուղղությամբ:</p>

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԿՆԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ -5-11-007
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ Հայաստանի տարբեր ջրակալներում տարածված բնիկ և կլիմայավարժեցված ձկնատեսակների, նրանց ձևաբանական, կենսաբանական ու էկոլոգիական առանձնահատկությունների, Հայաստանի ջրակալների էկոլոգիական հիմնախնդիրների ու դրանց լուծման ուղիների մասին, ինչպես նաև ձևավորել որոշիչների միջոցով Հայաստանի ջրակալներում տարածված ձկների տեսակային պատկանելությունը որոշելու և ձկնատեսակներին ձևաբանորեն ու կենսաբանորեն բնորոշելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-11-006 «Ձկների էկոլոգիա» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել Հայաստանի բնիկ (աբորիգեն) ձկների ձևաբանական, կենսաբանական ու էկոլոգիական առանձնահատկությունները, տեսակային կազմն՝ ըստ ջրակալների ու դրանց տիպերի, որոշել ձկների տեսակային պատկանելությունը, բնորոշել նրանց ձևաբանական և կենսաբանական հատկանիշները:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> ա. ճիշտ է ներկայացնում Հայաստանի հիմնական ջրակալները (լճերը, գետերը, ջրամբարները) և ցուցադրում դրանք քարտեզի վրա, բ. ճիշտ է բնորոշում Հայաստանի բնիկ սաղմոնազգի, ծածանազգի և լոքոազգի ձկնատեսակների ձևաբանական հիմնական հատկանիշները, գ. ճիշտ է ներկայացնում Սևանա լճում, Հայաստանի մյուս լճերում և արհեստական ջրամբարներում տարածված բնիկ ձկներին տեսակային կազմը, նրանց կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունները, դ. ճիշտ է ներկայացնում Հայաստանի գետերում տարածված բնիկ ձկների տեսակային կազմը, նրանց կենսաբանական ու էկոլոգիական առանձնահատկությունները, ե. ճիշտ է ներկայացնում Հայաստանի արդյունագործական նշանակություն ունեցող բնիկ ձկնատեսակները և նրանց տարածվածությունն ու պաշարներն՝ ըստ ջրակալների, զ. ճիշտ է բնորոշում Հայաստանի ձկնային տնտեսություններում հանդիպող թափոնային համարվող բնիկ ձկնատեսակները և նրանց կենսաբանական առանձնահատկությունները, է. ճիշտ է որոշում Հայաստանի բնիկ ձկնատեսակների առաջադրված առանձնյակները որոշիչի օգնությամբ:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել Հայաստանի ջրակալների կլիմայավարժեցված կամ ներթափանցած ձկների ձևաբանական, կենսաբանական ու էկոլոգիական առանձնահատկությունները, տեսակային կազմն՝ ըստ ջրակալների տիպերի, բնորոշել թափոնային ձկնատեսակների ազդեցությունը ձկնային տնտեսության գործունեության արդյունավետության վրա, որոշել ձկների տեսակային պատկանելությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում Հայաստանի ջրակալներում այլ տարածաշրջանների ձկնատեսակների կլիմայավարժեցման կամ ներթափանցման հիմնական պատճառները և ուղիները,

	<p>բ. ճիշտ է բնորոշում Սևանա լճում, Հայաստանի մյուս լճերում և արհեստական ջրամբարներում կլիմայավարժված կամ այստեղ ներթափանցած ձկնատեսակները, նրանց ձևաբանական, կենսաբանական ու էկոլոգիական առանձնահատկությունները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում Հայաստանի գետերում կլիմայավարժված կամ այստեղ ներթափանցած ձկնատեսակները, նրանց կենսաբանական ու էկոլոգիական առանձնահատկությունները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում Հայաստանի արդյունագործական նշանակություն ունեցող կլիմայավարժված ձկնատեսակները և նրանց տարածվածությունն ու արդյունագործական պաշարներն՝ ըստ ջրակալների,</p> <p>ե. ճիշտ է բնորոշում Հայաստանի ձկնային տնտեսություններում հանդիպող թափոնային կլիմայավարժված ձկնատեսակները և նրանց ազդեցությունը ձկնային տնտեսությունների գործունեության արդյունավետության վրա,</p> <p>զ. ճիշտ է որոշում Հայաստանի ջրակալներում կլիմայավարժված կամ այստեղ ներթափանցած ձկնատեսակների առաջադրված առանձնակները որոշյի օգնությամբ:</p>
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել Հայաստանի ջրակալների էկոլոգիական վիճակի և ձկնաշխարհի պահպանության խնդիրները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում Հայաստանի ջրակալների էկոլոգիական վիճակը և մարդածին գործոնների ազդեցությունը դրա վրա,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում Սևանա լճի հիմնախնդիրը և դրա լուծման ուղիները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում Հայաստանի ձկնաշխարհի պահպանության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում Հայաստանի «Կարմիր գրքում» գրանցված ձկնատեսակները և նրանց պաշարների վերականգման հիմնական միջոցառումները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԶԿՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ -5-11-008
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ արհեստական ձկնաբուծական լճակների, ավազանների ու ցանցավանդակների կառուցվածքի ու տեսակների, ձկնաբուծական տնտեսությունների արտադրական հիմնական գործընթացների, բուծվող առանձին ձկնատեսակների մասին, ինչպես նաև ձևավորել լճակների, ավազանների ու ցանցավանդակների սխեմաների նախագծման, ձկների բուծման ու աճեցման գործընթացների, ձկնատնտեսական հողաբարելավման (մելիորացիա) ու ձկնատնտեսական նշանակության ջրավազանների պարարտացման գործողություններ կատարելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-11-007 «Հայաստանի ձկնաշխարհը և նրա պահպանության հիմնախնդիրները» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել արհեստական լճակային ձկնաբուծական տնտեսությունների արտադրական գործընթացները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ամբողջահամակարգ արհեստական լճակային ձկնաբուծական տնտեսությունների արտադրական գործընթացը,

	<p>բ. ճիշտ է ներկայացնում թերհամակարգ արհեստական լճակային ձկնաբուծական տնտեսությունների արտադրական գործընթացը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ամբողջահամակարգ արհեստական լճակային ձկնաբուծական տնտեսությունների համար նախատեսված արտադրամասերը և դրանց գործառույթները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում թերհամակարգ արհեստական լճակային ձկնաբուծական տնտեսությունների համար նախատեսված արտադրամասերը և դրանց գործառույթները:</p>
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել արհեստական լճակների, ցանցավանդակների և ավազանների տեսակները՝ ըստ նշանակության և դրանց կառուցվածքը, կազմել ավազանների, ցանցավանդակների և լճակների առանձին տեսակների սխեմատիկ նախագծերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում արտադրական լճակների տեսակները՝ ըստ նշանակության և գործառույթի,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ձվադրման, մանրածկան աճեցման, աճեցման, բուսան, ձմեռացման, մայրական և ենթամայրերի, կարանտինացման, մեկուսիչ, ջրամատակարարող լճակների կառուցվածքը, ջրի անհրաժեշտ խորությունն ու մակերեսը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ձկնաբուծական նշանակություն ունեցող ավազանների և ցանցավանդակների կառուցվածքին ու շահագործմանը ներկայացվող պահանջները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում կենդանի ապրանքային ձկան մինչև վաճառքային պահպանման լճակների և ցանցավանդակների կառուցվածքը, ջրի անհրաժեշտ խորությունն ու մակերեսը,</p> <p>ե. ճիշտ է որոշում ձկնաբուծական տնտեսության տարբեր նշանակության արտադրական արհեստական լճակների և ավազանների հաշվարկային մակերեսների, խորությունների միջև եղած կախվածությունը,</p> <p>զ. ճիշտ է նախագծում արտադրական նշանակության, ավազանների, ցանցավանդակների և լճակների առանձին տեսակների սխեմաները:</p>
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ձկնաբուծության արտադրական գործընթացների հիմնական փուլերը և դրանց հաջորդականությունը և կատարել ձկնկիթի ու սերմնահեղուկի ստացման, բեղմնավորման, ինկուբացիայի նախապատրաստման գործողություններ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ձկնաբուծական գործընթացի նախնական փուլը՝ մայրական կազմի ձևավորման արտադրական գործընթացը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում մայրական կազմի ձևավորման համար անհրաժեշտ պայմանների (ջրաբանական, ջրաքիմիական, ջերմաստիճանային և այլն) ապահովման գործընթացները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում մայրական կազմի սեռական հասունացման խթանման էկոլոգիական և ֆիզիոլոգիական մեթոդները,</p> <p>դ. ճիշտ է կատարում ձկնկիթի և սերմնահեղուկի ստացման և պահպանման գործառույթները,</p> <p>ե. ճիշտ է կատարում ձկնկիթի բեղմնավորման և ինկուբացիայի նախապատրաստման գործողությունները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում թրթուրների ստացման և պահպանման գործողությունները,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում մանրածկան ստացման, պահպանման և աճեցման գործողությունները,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում ինկուբացիայի ընթացքում արտաքին միջավայրի անհրաժեշտ պայմանների պահպանման գործողությունները,</p>

	թ. ճիշտ է շահագործում ինկուբացիոն սարքավորումները, ժ. ճիշտ է ներկայացնում ձկների ապրանքային աճեցման գործողությունները, ժա. ճիշտ է որոշում մայրական կազմի, ձկնկիթի, սերմնահեղուկի, թրթուրների և մանրածկան որակը:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ձկնատնտեսական հողաբարելավման (մելիորացիա) համալիր տեխնիկական և կազմակերպատնտեսական գործընթացը, կատարել ձկնատնտեսական նշանակության ջրավազանների հողաբարելավում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ձկնատնտեսական հողաբարելավման դերը միջավայրի անհրաժեշտ պայմանների բարելավման և ջրային տարածքների ձկնարդյունավետության բարձրացման գործընթացում, բ. ճիշտ է ներկայացնում ձկնատնտեսական հողաբարելավման աշխատանքների իրականացման առանձնահատկությունները, գ. ճիշտ է կատարում ձկնատնտեսական հողաբարելավման աշխատանքները:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել ձկնաբուծության մեջ օգտագործվող պարարտանյութերը, օգտագործել դրանք ձկնաբուծության համար զանազան նշանակության լճակների պարարտացման համար
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ձկնաբուծության մեջ օգտագործվող պարարտանյութերը և դրանց օգտագործման ձևերը, բ. ճիշտ է որոշում հանքային և օրգանական պարարտանյութերի չափաքանակներն ըստ ձկնատնտեսական նշանակության ջրավազանների մակերեսի, գ. ճիշտ է որոշում պարարտացման գործակցի մեծությունը, դ. ճիշտ է կատարում ձկնատնտեսական նշանակության ջրավազանների պարարտացման գործողությունները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԶԿՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՐԱՏԵՆՆԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ -5-11-009
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ձկնային տնտեսությունների կառուցման համար տեղանքի երկրաբաշխական և տեղագրական գծահանումների, ջրատեխնիկական կառույցների ու սարքերի կառուցվածքի և դրանց անվտանգ շահագործման մասին, ինչպես նաև ձևավորել երկրաբաշխական և տեղագրական թեոդոլիտային ու հարթաչափային գծահանումների իրականացման, գրունտային ջրերի մակարդակի որոշման ու հեռացման աշխատանքների կազմակերպման, ջրանցքների, ջրթողների, խողովակաշարերի թողունակության հաշվարկման, ձկնաբուծական տնտեսությունների ջրատեխնիկական կառույցների ու սարքերի անվտանգ շահագործման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-11-007 «Հայաստանի ձկնաշխարհը և նրա պահպանության հիմնախնդիրները» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կատարել տեղանքի երկրաբաշխական և տեղագրական թեոդոլիտային ու հարթաչափային գծահանումներ, քարտեզավորել դրանց արդյունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կողմնորոշվում տեղանքում, կատարում տեղանքի մոտավոր հանույթ,

	<p>բ. ճիշտ է կատարում տեղադիտական ուսումնասիրությունները, կարդում տեղագրական քարտեզը, որոշում ռելիեֆի ձևերը, բարձրությունները, թեքությունները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում մանրամասն գործիքային հանույթի տեսական հիմունքները, հետազոտությունների գործնական իմաստը,</p> <p>դ. ճիշտ է կատարում մենզուրային հանույթը՝ օգտվելով թեոդոլիտային և հարթաչափական գործիքներից ,</p> <p>ե. ճիշտ է կառուցում ու ներկայացնում իրավիճակային տարբեր մասշտաբի քարտեզներ:</p>
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ձկնային տնտեսության տեղանքի հողերկրաբանական կառուցվածքը և հիդրոտեխնիկական կառույցների իրականացման համար անհրաժեշտ երկրաբանական պայմանները, մշակել հորատանցքերից ստացված նմուշները և որոշել գրունտային ջրերի մակարդակը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում գրունտների տեսակները և դրանց հատկությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում խուզահորանների տեղադրման վայրերը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում և կիրառում հորատանցքերից ստացված նմուշների մշակման եղանակները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում առաջադրված տեղանքի երկրաբանական կառուցվածքը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում և կիրառում գրունտային ջրերի մակարդակի որոշման եղանակները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում գրունտային ջրերի հեռացման ձևերը,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում տեղանքի երկրաբանական ընդհանուր բնութագիրը դաշտային ուսումնասիրությունների տվյալների հիման վրա,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում հիդրոտեխնիկական կառույցների շինարարության իրականացման նպատակահարմարությունը՝ առաջադրված տեղանքի երկրաբանական ընդհանուր բնութագրի կազմման հիման վրա:</p>
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ձկնաբուծական տնտեսությունների ջրատեխնիկական կառույցների ու սարքերի կառուցվածքը, հիդրոտեխնիկական շինությունների վերանորոգման աշխատանքների իրականացման կարգը, կատարել ջրանցքների, ջրթողների, խողովակաշարերի թողունակության հաշվարկներ, անվտանգ շահագործել ձկնաբուծական տնտեսությունների հիդրոտեխնիկական կառույցներն ու սարքերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ձկնաբուծական հիդրոտեխնիկական շինությունների կառուցվածքը և առանձնահատկությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում տարբեր ջրատեխնիկական կառույցների և սարքերի մասնագիտական անվանումները և նշանակությունը,</p> <p>գ. ճիշտ է կատարում ջրանցքների, ջրթողների, խողովակաշարերի թողունակության հաշվարկները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում պատվարների և ամբարտակների կառուցվածքը, դրանց անվտանգ շահագործման կանոնները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում ջրատեխնիկական կառույցների ընթացիկ և հիմնական նորոգման ժամկետները և կարգը,</p> <p>զ. անվտանգ շահագործում է ջրատեխնիկական կառույցներն և սարքերը:</p>

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԿՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ- 5-11-010
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ձկների կերակրման համար օգտագործվող կենդանի և ոչ կենդանի (արհեստական) կերերի, դրանց ծագման, դասակարգման, քիմիական բաղադրության, սննդարարության, մարսելիության, ջերմասեր և սառչոյա ձկների կերակրման առանձնահատկությունների մասին, ինչպես նաև ձևավորել ձկների կերաբաժինները հաշվարկելու, կերակրման նորմերը, կերերի բաղադրությունը, կերի որակը, չոր համակցված կերերի տարբեր չափսերը, կերային գործակիցը, կերերի սպիտակուցային հարաբերությունը որոշելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-11-008 «Ձկնային տնտեսությունների կառուցվածքը և արտադրական գործընթացները» և ՁԿԲ 5-11-009 «Ձկնատնտեսական հիդրոտեխնիկա» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ձկների կերակրման համար օգտագործվող կերերի տեսակները, դրանց ծագումը, դասակարգումը, քիմիական բաղադրությունը, սննդարարությունը, ձևավորել կերակրման նորմերը և կազմել կերաբաժիններ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ձկների կերակրման համար օգտագործվող կերերի տեսակները, բ. ճիշտ է կատարում կերերի դասակարգումն՝ ըստ ծագման, գ. ճիշտ է ներկայացնում առաջադրված՝ տարբեր տեսակի կերերի քիմիական բաղադրությունը, դ. ճիշտ է ներկայացնում հիմնական կերերի սննդարար արժեքները և ճիշտ է գնահատում առաջադրված կերերի սննդարարությունը, ե. ճիշտ է ձևավորում ձկների կերակրման նորմերը և կերաբաժինները, զ. ճիշտ է օգտագործում կերային գործակցի և կերի օգտագործման գործակիցները:
Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել և իրականացնել ջերմասեր ձկների տարբեր սեռատարիքային խմբերի կերակրումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ հաճախականությամբ է կատարում ձկների թրթուրների կերակրումը, բ. ճիշտ է ընտրում թրթուրների համար մեկնարկային կեր հանդիսացող համակցված կերի չափսերն՝ ըստ սննդարարության, մարսելիության, ջրակայունության և ջրում լողալու ունակության, գ. ճիշտ է ներկայացնում կերերի օգտագործման արդյունավետությունը՝ կախված ջրավազանի ջերմային ու ջրաքիմիական ռեժիմից և թրթուրների նստեցման խտությունից, դ. ճիշտ է որոշում կերի օրական չափաբաժինը, ե. ճիշտ հաճախականությամբ ու մեթոդով է կատարում կերակրումը, զ. ճիշտ է բաշխում կերը արհեստական ջրակալի համապատասխան վայրերում, է. ճիշտ է օգտագործում ավտոկերամանը:

Ուսումնառության արդյունք 3	Կազմակերպել և իրականացնել սառչրյա ձկների տարբեր սեռատարիքային խմբերի կերակրումը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում սառչրյա ձկների կերակրման առանձնահատկությունները տարբեր սեռատարիքային խմբերում,</p> <p>բ. ճիշտ է ընտրում թրթուրների համար մեկնարկային կեր հանդիսացող համակցված կերի չափսերն՝ ըստ սննդարարության, մարսելիության, ջրակայունության և ջրում լողալու ունակության,</p> <p>գ. ճիշտ է որոշում թրթուրներին տրվող կերի մեկանգամյա չափաբաժինը,</p> <p>դ. ճիշտ հաճախականությամբ ու մեթոդով է կատարում մանրաձկների կերակրումը,</p> <p>ե. ճիշտ է որոշում համակցված կերերի չափսերն՝ ըստ ձկների սեռատարիքային կազմի,</p> <p>զ. պահպանում է տրվող կերի չափսերն ու քանակը ձկան անհատական զանգվածի աճին ու ջրակալի ջրաբանական առանձնահատկություններին համապատասխան:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԿՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ -5-11-011
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ձկների հիվանդությունների մասին, ինչպես նաև ձևավորել ձկների հիմնական հիվանդությունները տարբերակելու և հիվանդությունների դեմ ուղղված կանխարգելման միջոցառումներ իրականացնելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-11-010 «Ձկների կերակրում» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ձկների հիվանդությունները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ձկների հիվանդությունների առաջացման պատճառները և օրինաչափությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ձկների վիրուսային հիվանդությունները և դրանց հիմնական ախտանիշները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ձկների բակտերիոլոգիական հիվանդությունները և դրանց հիմնական ախտանիշները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ձկների մակաբույծների հիմնական խմբերին և նրանց կողմից առաջացրած հիվանդություններն ու դրանց հիմնական ախտանիշները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում ձկների ոչ վարակիչ հիվանդությունները և դրանց հիմնական ախտանիշները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում ձկների կենսագործունեության համար վտանգավոր նյութերը և ձկների թունավորման ընթացքը:</p>
Ուսումնառության արդյունք 2	Որոշել ձկների հիվանդությունների ախտանիշները
Կատարման չափանիշներ	<p>ա. հայտնաբերում ու ճիշտ է որոշում ձկների տարբեր հիվանդությունների հիմնական ախտանիշները,</p> <p>բ. ճիշտ է որոշում ձկների կենսագործունեության համար վտանգավոր նյութերի առկայությունը ջրակալներում:</p>
Ուսումնառության արդյունք 3	Իրականացնել ձկների հիվանդությունների դեմ ուղղված կանխարգելման միջոցառումները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ձկների հիվանդությունների դեմ ուղղված կանխարգելման միջոցառումների նպատակներն ու խնդիրները,

	<p>բ. ճիշտ է ներկայացնում ձկնաբուժական տնտեսությունների կառուցման և շահագործման անասնաբուժական-սանիտարական կանոնները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ջրակալներում ջրաբանական և ջրաքիմիական նպաստավոր պայմանների ստեղծումը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ձկների կենսատեխնոլոգիական աճեցման պայմանները,</p> <p>ե. ճիշտ է իրականացնում ձկների կանխարգելիչ մշակումը,</p> <p>զ. ճիշտ է կատարում մահացած ձկների հավաքը և ոչնչացումը,</p> <p>է. ճիշտ է վերահսկում և կարգավորում ջրակալների ջերմաստիճանային, գազային և ջրաքիմիական ռեժիմը,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում ձկների կերերի պահպանման կանոնները,</p> <p>թ. ճիշտ է կատարում ձկների կերերի պիտանիության ստուգումը,</p> <p>ժ. ճիշտ է ներկայացնում ջրակալները տարբեր թունավոր նյութերից պահպանելու միջոցառումները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՁԿՆԵՐԻ ՏՈՀՄԱՅԻՆ ԳՈՐԾ ԵՎ ԲՈՆԻՏԱՑՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ- 5-11-012
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ապրանքային ձկների ընտրասերման և տոհմային գործի վարման մասին, ինչպես նաև ձևավորել ապրանքային ձկների արտադրողների բոնիտացման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	28 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-10-011 «Ձկների հիվանդությունները և դրանց կանխարգելումը» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ձկների ընտրասերման և տոհմային գործի սկզբունքները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում տոհմային, տոհմատնկանյութային, ապրանքային տնտեսություններում ընտրասերման և տոհմային գործի նշանակությունն ու դրա վարման առանձնահատկությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում կարգաբանական տարբեր խմբերի ձկների տոհմային գործի հիմնական տարբերությունները:</p>
Ուսումնառության արդյունք 2	Կատարել արտադրողների (մայրական կազմի) բոնիտացում
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է լրացնում յուրաքանչյուր արտադրող ձկան անձնագիրը,</p> <p>բ. ճիշտ է կատարում տարբեր նշանակության տոհմային, տոհմատնկանյութային և ապրանքային տնտեսությունների արտադրողների (մայրական կազմի) բոնիտացման գործողությունները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ- 5-11-013
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ձկնաբուժական տնտեսություններում կիրառվող տարբեր նշանակության սարքավորումների մասին, ինչպես նաև ձևավորել տվյալ պայմանների համար օգտվորիչների անհրաժեշտ կարողությունները հաշվարկելու կարողություններ:

Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-10-011 «Ձկների հիվանդությունները և դրանց կանխարգելումը» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ձկնաբուժական տնտեսություններում կիրառվող տարբեր նշանակության սարքավորումները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ջրի մեխանիկական և կենսաբանական մաքրման նպատակը և իմաստը, բ. ճիշտ է ներկայացնում կենսաբանական ֆիլտրերի գործողության սկզբունքը և դրանց տեսակները, գ. ճիշտ է ներկայացնում ջրի վարակազերծման սարքերի գործողության սկզբունքը (ՈՒՄ ճառագայթում, օզոնավորում), դ. ճիշտ է ներկայացնում կերակրիչների և կերաբաշխիչների կիրառման արդյունավետությունը, ավտոմատացված կերակրման առավելությունները:
Ուսումնառության արդյունք 2	Տվյալ պայմանների համար հաշվարկել օդավորիչների անհրաժեշտ կարողությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ջրի օդավորիչների և թթվածնավորիչների իմաստը և սարքավորումները, բ. ճիշտ է հաշվարկում օդավորիչների անհրաժեշտ կարողությունները տվյալ պայմանների համար:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ- 5-11-014
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ապրանքային ձկների բազմացման ու խնամքի առանձնահատկությունների մասին, ինչպես նաև ձևավորել ձկների համակողմանի խնամքի իրականացման, արհեստական սերմնավորման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	80 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ- 5-11-012 «Ապրանքային ձկների տոհմային գործ և բոնիտացում» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կատարել լճակային ապրանքային ձկնաբուժական տնտեսությունների սաղմոնակերպ ձկների բուծման, աճեցման, խնամքի և դրանց արդյունքների հաշվարկային ու վերլուծական գործողություններ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սաղմոնակերպ ձկների ձկնկիթի արհեստական սերմնավորման եղանակները, ձկնկիթի զարգացման շրջանի առանձնահատկությունները, թրթուրների ստացման և աճեցման գործընթացը, բ. ճիշտ է կատարում արհեստական սերմնավորման գործընթացը և ճիշտ է ընտրում բեղմնավորված ձկնկիթի զարգացման համար անհրաժեշտ ինկուբացիոն սարքավորումները, գ. ճիշտ է կատարում մանրաձկների խմբերի բաժանումն՝ ըստ քաշային և չափային ցուցանիշների, դ. ճիշտ է հաշվարկում մանրաձկների կերաբաժինները և կազմում կերակրման հեռանկարային պլանը,

	<p>ե. ճիշտ է կատարում տասնօրյակային ստուգողական որսը և վերլուծում այդ որսից ստացված արդյունքները,</p> <p>զ. ճիշտ է կատարում ձկնատնկանյութի, ապրանքային ձկան, մայրական կազմի ձկնատնտեսական հաշվարկները:</p>
Ուսումնառության արդյունք 2	Կատարել լճակային ապրանքային ձկնաբուծական տնտեսությունների ջերմասեր ձկների բուծման, աճեցման, խնամքի և դրանց արդյունքների հաշվարկային ու վերլուծական գործողություններ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ջերմասեր ձկների բնական ձվադրության կազմակերպման, արհեստական խթանման միջոցով հասուն սեռական արգասիքների ստացման, ձկնկիթի սերմնավորման եղանակները, ձկնկիթի զարգացման շրջանի առանձնահատկությունները, թրթուրների ստացման և աճեցման գործընթացը,</p> <p>բ. ճիշտ է կատարում արհեստական բեղմնավորման գործընթացը և ճիշտ է ընտրում բեղմնավորված ձկնկիթի զարգացման համար անհրաժեշտ ինկուբացիոն սարքավորումները,</p> <p>գ. ճիշտ է բաժանում մանրաձկներին տարբեր խմբերի՝ ըստ քաշային և չափային ցուցանիշների,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում միամատային ձկների ծմեռացման գործընթացը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում միամյա ձկների բտման և ապրանքային ձկան աճեցման գործընթացը,</p> <p>զ. ճիշտ է հաշվարկում ջերմասեր ձկների կերաբաժինները և կազմում կերակրման հեռանկարային պլանը,</p> <p>է. ճիշտ է կատարում մանրաձկների տասնօրյակային ստուգողական որսը և վերլուծում այդ որսից ստացված արդյունքները,</p> <p>ը. ճիշտ է կատարում ձկնատնկանյութի, ապրանքային ձկան, մայրական կազմի ձկնատնտեսական հաշվարկները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԿՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ- 5-11-015
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել կենդանի ձկների, նրանց թրթուրների, ձկնատնկանյութի և սեռական արգասիքների տեղափոխման կազմակերպման ու դրա վերահսկման գիտելիքներ ու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-11-014 «Ապրանքային ձկնաբուծություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իրականացնել կենդանի ձկների, նրանց թրթուրների, ձկնատնկանյութի և սեռական արգասիքների տեղափոխման (ներտնտեսային, միջտնտեսային) գործընթացները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ձկնային տնտեսության ներսում մայրական կազմի, թրթուրների և ձկնատնկանյութի տեղափոխման կազմակերպման և վերահսկման գործընթացը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում մեկ ձկնային տնտեսությունից մյուսը կենդանի ձկների, նրանց թրթուրների, ձկնատնկանյութի և սեռական արգասիքների (ձկնկիթ, սերմնահեղուկ) տեղափոխման կազմակերպման և վերահսկման գործընթացը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ապրանքային ձկների՝ մինչև վաճառքի կետ տեղափոխման կազմակերպման գործընթացը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում բնական ջրամբարներից մայրական կազմի (արտադրողների) տեղափոխման կազմակերպման և վերահսկման գործընթացը,</p>

	<p>ե. ճիշտ է ներկայացնում ձկնային տնտեսությունից ձկնատնկանյութի՝ բնական ջրամբարներ տեղափոխման կազմակերպման և վերահսկման գործընթացը,</p> <p>զ. ճիշտ է կատարում մայրական կազմի, թրթուրների, ձկնատնկանյութի, ձկնկիթի տեղափոխման կազմակերպման և վերահսկման գործողությունները:</p>
Ուսումնառության արդյունք 2	Ապահովել կենդանի ձկների, նրանց թրթուրների, ձկնատնկանյութի և սեռական արգասիքների տեղափոխման նախապատրաստման համար անհրաժեշտ պայմաններն ու պահանջները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում տարբեր ձկնատեսակների մայրական կազմի, սեռական արգասիքների, թրթուրների, մանրաձկների տեղափոխման ընթացքում ջրի որակին ու ջերմաստիճանին, ինչպես նաև տրանսպորտային միջոցներին ներկայացվող պահանջները,</p> <p>բ. ճիշտ է նախապատրաստում կենդանի ձկների, նրանց թրթուրների և ձկնատնկանյութի տեղափոխման տարաները և ապահովում է նրանց տեղափոխման համար անհրաժեշտ ջրի քանակական և որակական պահանջները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում կենդանի ձկների, նրանց թրթուրների և ձկնատնկանյութի տեղափոխման համար օգտագործվող սարքավորումների շահագործման սկզբունքները և կիրառում դրանք,</p> <p>դ. ճիշտ է կատարում արտահանվող ձկնատնկանյութի տարայավորումը և պահպանում ձկների նստեցման խտությունը տարաներում:</p>
Ուսումնառության արդյունք 3	Ապահովել կենդանի ձկների, նրանց թրթուրների, ձկնատնկանյութի և սեռական արգասիքների տեղափոխման սանիտարահիգիենիկ պայմանները և պահանջները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ներկրվող և արտահանվող կենդանի ձկների ու ձկնատնկանյութի մեկուսացման պայմաններն ու ժամկետները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում այն հիվանդությունները, որոնցով հիվանդ ձկներին արգելվում է ներկրել կամ արտահանել,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ներկրվող և արտահանվող կենդանի ձկների, նրանց թրթուրների և ձկնատնկանյութի սանիտարահիգիենիկ պայմաններն ու պահանջները,</p> <p>դ. ճիշտ է կատարում ձկների տեղափոխման համար նախատեսված տարաների ախտահանումը և ներկրված ձկների հակամակաբուժային լոզանքների իրականացումը</p> <p>ե. ճիշտ է տարբերակում այն հիմնական արատները, որոնցով արգելվում է տեղափոխել ձկներին,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում կենդանի ձկների և ձկնատնկանյութի տեղափոխման համար անհրաժեշտ անասնաբուժական թույլտվության բովանդակությունը և դրա տրման կարգը:</p>
ՄՈՂՈՒԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԶԿՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԶԿԲ -5-11-016
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ձկնաբուժական աշխատանքների պլանավորման և կազմակերպման, կատարվող աշխատանքների վերահսկման մասին, ինչպես նաև նրա մոտ ձևավորել ձկնային տնտեսության հիմնական արդյունաբերական ցուցանիշների հաշվարկման ու դրանց հաշվարկահաշվետվական փաստաթղթավորման, ձկնաբուժական

	աշխատանք կատարողների մասնագիտական գործունեության վերահսկման ու որակի գնահատման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-10-013 «Ձկնաբուժական տնտեսություններում կիրառվող սարքավորումները» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Պլանավորել ձկնային տնտեսության ձկնաբուժական աշխատանքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ձկնաբուժական աշխատանքների պլանավորման էությունը և նշանակությունը ձկնային տնտեսության արդյունավետ գործունեության համար, բ. ճիշտ է ներկայացնում ձկնաբույժի տեղն ու դերը ձկնաբուժական աշխատանքների պլանավորման գործընթացում, գ. ճիշտ է կազմում առաջադրված ձկնային տնտեսության ձկնաբուժական աշխատանքների իրականացման գործողությունների պլանը, դ. ճիշտ է կիրառում ձկնաբուժական աշխատանքների պլանավորման մեթոդները:
Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել ձկնաբուժական աշխատանքները և վերահսկել դրանց ընթացքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ձկնաբուժական աշխատանքների կազմակերպման հիմնական դրույթները, բ. ճիշտ է ներկայացնում ձկնային տնտեսության կառուցվածքը և հիմնական ստորաբաժանումները, գ. ճիշտ է ներկայացնում ձկնային տնտեսության տարբեր ստորաբաժանումների փոխգործակցությունները և դրանց բնույթը, դ. ճիշտ է ներկայացնում ձկնաբուժական աշխատանքներ կատարողների գործառույթները և պարտականությունները, ե. ճիշտ է ներկայացնում ձկնաբուժական աշխատանքներ կատարողների մոտիվացման (շահադրման) և խրախուսման ձևերն ու մեթոդները, զ. ճիշտ է կատարում ձկնաբուժական աշխատանքներ կատարողների հրահանգավորման գործընթացը, է. ճիշտ է ներկայացնում ձկնաբուժական աշխատանքներ կատարողների մասնագիտական գործունեության կազմակերպման աշխատանքները և դրանց վերահսկման ու որակական գնահատման գործընթացները, ը. ճիշտ է կիրառում ձկնաբուժական աշխատանքների գնահատման մեթոդները:
Ուսումնառության արդյունք 3	Հաշվարկել ձկնային տնտեսության հիմնական արդյունաբերական ցուցանիշները և կատարել դրանց հաշվարկային-հաշվետվական փաստաթղթավորում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ձկնային տնտեսության արդյունաբերական հիմնական ցուցանիշները և դրանց հաշվարկման սկզբունքները, բ. ճիշտ է ներկայացնում ձկնային տնտեսության արդյունաբերական ցուցանիշների հաշվարկային-հաշվետվական փաստաթղթավորման էությունը, գ. ճիշտ է ներկայացնում փաստաթղթաշրջանառության, ձկնային տնտեսության արդյունաբերական ցուցանիշների հաշվառման ու հաշվետվություններ ներկայացնելու կարգն ու կանոնները,

	դ. ճիշտ է հաշվարկում առաջադրված ձկնային տնտեսության արդյունաբերական հիմնական ցուցանիշները, ե. ճիշտ է լրացնում հաշվարկային-հաշվետվական փաստաթղթերն՝ ըստ սահմանված ձևերի:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՁԿՆԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ- 5-11-017
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ձկնաբուծական տնտեսությունների հատուկ և համակցված ձևերի մասին, ինչպես նաև ձևավորել լճակներում աճեցվող տարբեր ձկնատեսակների արդյունավետ համակեցության ձևավորման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-10-014 «Ապրանքային ձկնաբուծություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աճեցման և բտման լճակներում համակեցության (բազմակուլտուրայի) պայմաններում օգտագործվող ձկնատեսակները, նրանց կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունները, ձևավորել լճակներում աճեցվող տարբեր ձկնատեսակների արդյունավետ համակեցություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բազմակուլտուրայի մեջ օգտագործվող ձկնատեսակները, նրանց կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունները, բ. ճիշտ է ներկայացնում բազմակուլտուրայի կիրառման պայմաններում ձկների բազմացման և աճեցման առանձնահատկությունները, գ. ճիշտ է ներկայացնում բազմակուլտուրայի մեջ օգտագործվող ձկնատեսակների բազմացման, թրթուրների և մանրաձկան աճեցման անհրաժեշտ պայմանները, դ. ճիշտ է ներկայացնում բտման արհեստական լճակների ձկնարդյունավետության ավելացումը կարպի և բուսակեր ձկների համատեղ աճեցման դեպքում, ե. ճիշտ է ներկայացնում բտման արհեստական լճակների ձկնարդյունավետության ավելացումը կարպի հետ գիշատիչ ձկների համատեղ աճեցման դեպքում, զ. ճիշտ է որոշում աճեցման և բտման ջրավազաններում ձկների տարիքային խմբերը՝ արդյունավետ համակեցություն ձևավորելու նպատակով, է. ճիշտ է ներկայացնում տարբեր տեսակի ձկների համատեղ աճեցման ընթացքում արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը ձկների նստեցման խտության վրա, ը. ճիշտ է որոշում բազմակուլտուրայի մեջ օգտագործվող ձկնատեսակների կազմը և նրանց հարաբերակցությունն՝ ըստ տարբեր բնակլիմայական գոտիներում գտվող լճակների ջրակենսաբանական պայմանների:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ձկնաբուծական տնտեսությունների հատուկ և համակցված ձևերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տարբեր նշանակության նպատակով ստեղծված ջրակալներում (տորֆահանքեր, ավազահանքեր,

	<p>ոռոգման և հիդրոէներգետիկայի, ատոմակայանների համար նախատեսված ջրամբարներ, ջրանցքներ) ձկների բազմացման և աճեցման գործընթացը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում տարբեր նշանակության նպատակով ստեղծված ջրամբարների և ջրանցքների ջրաքիմիական, ջրաբանական և ջերմաստիճանային ռեժիմների ազդեցությունը ձկների աճի ու բուսման վրա,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում բուսակեր ձկների օգտագործումը ոռոգման համակարգի ջրանցքներում,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում կարպի և ընտանի ջրլող թռչունների համատեղ աճեցման պայմանները արհեստական լճակներում,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում ձկնացանքաշրջանառության առավելությունները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱԿՎԱՐԻՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ, ՁԵՎԱՎՈՐՈՒՄ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՈՒՄ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ- 5-11-018
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել ակվարիումային համակարգերի ստեղծման, տեխնիկական հագեցման ու շահագործման, ակվարիումների ձևավորման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	80 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-10-006 «Ձկների էկոլոգիա» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ակվարիումային օրգանիզմների կենսաբանական առանձնահատկությունները, որոշել ակվարիումային օրգանիզմների կարգաբանական պատկանելությունը և ստեղծել բարենպաստ պայմաններ նրանց պահպանման համար
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է որոշում ակվարիումային տարբեր օրգանիզմների տեսակային կամ ցեղային պատկանելությունը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ակվարիումային օրգանիզմների կենսաբանական առանձնահատկությունները,</p> <p>գ. ակվարիումային տարբեր օրգանիզմների անազատ պայմաններում պահպանման համար ստեղծում է բարենպաստ պայմաններ:</p>
Ուսումնառության արդյունք 2	Նախագծել, ձևավորել, տեխնիկապես հագեցնել և շահագործել ակվարիումները՝ ըստ ակվարիումային օրգանիզմների տեսակների
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ակվարիումիստիկայի նպատակներն ու խնդիրները,</p> <p>բ. ճիշտ է նախագծում և ձևավորում ակվարիումը՝ կախված ակվարիումի և ակվարիումային օրգանիզմների տեսակներից կամ դրանց համակեցությունից,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում տարբեր ակվարիումային օրգանիզմների համակեցության սկզբունքները,</p> <p>դ. ճիշտ է հագեցնում ակվարիումը տարբեր տեխնիկական միջոցներով՝ ակվարիումային օրգանիզմների բնականոն կենսագործունեությունը ապահովելու համար,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում ակվարիումային տեխնիկական միջոցները և դրանց շահագործման նորմատիվները,</p> <p>զ. ճիշտ է շահագործում ակվարիումային տեխնիկական միջոցներն՝ ըստ ակվարիումային օրգանիզմների տեսակների կամ դրանց համակեցության,</p>

	է. ճիշտ է բնակեցնում ակվարիումը տարբեր ակվարիումային օրգանիզմներով, ը. ճիշտ է կազմակերպում և վերահսկում ակվարիումի ջրակենսաբանական ռեժիմի երկարատև ու կայուն պահպանման գործընթացը՝ սահմանված պահանջներին համապատասխան ակվարիումային օրգանիզմների խնամքը և պահպանումը բնականոն իրականացնելու համար
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱԿՎԱՐԻՈՒՄԱՅԻՆ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՍՆՆԴԱՌՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ- 5-11-019
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել ակվարիումային ակվարիումային օրգանիզմների կերակրման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ 5-11-010 «Ձկների կերակրում» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ակվարիումային օրգանիզմների սննդառության առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ակվարիումային օրգանիզմների սննդառության առանձնահատկությունները, բ. ճիշտ է ներկայացնում ակվարիումային կենդանիների համար սնունդ հանդիսացող չոր, սառեցված ու կենդանի կերերը և դրանց օգտագործման սկզբունքներն ու չափաբաժիններն՝ ըստ ակվարիումային կենդանիների տեսակային պատկանելության:
Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել և իրականացնել ակվարիումային օրգանիզմների սննդառությունը
Կատարման չափանիշներ	ա. ստանում և լաբորատոր պայմաններում պահպանում է ակվարիումային կենդանիների թրթուրների ու մատղաշի սննդառության համար անհրաժեշտ տարբեր օրգանիզմների կուլտուրաներ, բ. ճիշտ է կազմում ակվարիումային կենդանիների կերակրման ժամանակացույցը և իրականացնում կերակրումը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱԿՎԱՐԻՈՒՄԱՅԻՆ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ԲԱԶՄԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»	
Մոդուլի դասիչը	ՁԿԲ- 5-11-020
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ակվարիումային տարբեր օրգանիզմների (բույսեր, կենդանիներ) խնամքի և բազմացման տեխնոլոգիայի վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել ակվարիումային օրգանիզմների խնամքի, կերակրման, բազմացման, հիվանդությունների կանխարգելման ու բուժման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	80 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՁԿԲ- 5-11-018 «Ակվարիումների նախագծում, ձևավորում, տեխնիկական հագեցում և շահագործում», ՁԿԲ- 5-11-019 «Ակվարիումային օրգանիզմների սննդառություն» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ակվարիումային օրգանիզմների հիվանդությունների ու դրանց ծնող պատճառները, կանխարգելել, որոշել ու բուժել հիվանդությունները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ակվարիումային օրգանիզմների հիմնական հիվանդությունների ծագման պատճառները, հիվանդության ախտանիշները,</p> <p>բ. ճիշտ է ախտորոշում ակվարիումային օրգանիզմների առավել տարածված հիվանդությունները՝ օգտագործելով զանազան տեխնիկական միջոցներ և (կամ) գրական աղբյուրներ,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ակվարիումային օրգանիզմների առավել տարածված հիվանդությունների դեմ պայքարի միջոցները և ճիշտ է կիրառում դրանք,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ակվարիումային օրգանիզմների հիվանդությունների կանխարգելման միջոցները և դրանց կիրառման սկզբունքները,</p> <p>ե. ճիշտ է իրականացնում անասնաբուժական նշանակումները կամ երաշխավորությունները ակվարիումային օրգանիզմների հիվանդությունների կանխարգելման կամ բուժման նպատակով:</p>
Ուսումնառության արդյունք 2	Բազմացնել և խնամել ակվարիումային տարբեր օրգանիզմներ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ակվարիումային տարբեր օրգանիզմների բազմացման և դրա համար անհրաժեշտ պայմանների առանձնահատկությունները,</p> <p>բ. ստեղծում է ակվարիումային տարբեր օրգանիզմների բազմացման համար անհրաժեշտ պայմաններ,</p> <p>գ. ճիշտ է ձևավորում և խնամում ակվարիումային օրգանիզմների մայրական կազմը,</p> <p>դ. ճիշտ է որոշում մայրական կազմի սեռահասունության աստիճանը՝ ըստ անհրաժեշտության կատարում է բազմացումը խթանող ներարկումներ,</p> <p>ե. ճիշտ է կազմակերպում ակվարիումային օրգանիզմների ծվերի կամ ձկնկիթի ինկուբացիան, ինչպես նաև այդ օրգանիզմների թրթուրների, մատղաշների, երիտասարդ առանձնյակների խնամքը:</p>

Միջին մասնագիտական կրթության 3109 «Ձկնաբանություն և ձկնաբուծություն» մասնագիտության օրինակելի ուսումնական պլան

N	Առարկայախմբեր, առարկաներ և մոդուլներ	Վկայություններ	Ուսանողի առավելագույն բեռնվածությունը, ժամ	Պարտադիր լսարանային պարապմունքներ, ժամ	Ուսուցման երաշխավորվող տարին
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ					
1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		108	72	1
2	Տնտեսագիտության հիմունքներ		72	48	2
3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		72	48	2
4	Իրավունքի հիմունքներ		54	36	2
5	Պատմություն		72	48	1
6	Ռուսաց լեզու		108	72	1-2
7	Օտար լեզու		108	72	1-2
8	Ֆիզիկական կուլտուրա		112	112	1-2
9	Էկոլոգիայի հիմունքներ		54	36	1
10	Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		27	18	1
ԸՆԴԱՄԵՆԸ			787	562	
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
1	Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ		81	54	1
2	Հաղորդակցություն		54	36	1
3	Անվտանգություն և առաջին օգնություն		54	36	1
4	Համակարգչային օպերատորություն		81	54	1
ԸՆԴԱՄԵՆԸ			270	180	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ					
1	Ջրաբանություն		81	54	1
2	Անողնաշարավորների կենդանաբանություն		81	54	1
3	Ջրաքիմիա և ջրաֆիզիկա		81	54	1
4	Ջրակենսաբանություն		54	36	1
ԸՆԴԱՄԵՆԸ			297	198	
ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ					
1	Ձկնաբանություն		108	72	1
2	Ձկների էկոլոգիա		54	36	1
3	Հայաստանի ձկնաշխարհը և նրա պահպանության հիմնախնդիրները		108	72	1
4	Ձկնային տնտեսությունների տեսակները, կառուցվածքը և արտադրական գործընթացները		108	72	2
5	Ձկնատնտեսական ջրատեխնիկա		108	72	2
6	Ձկների կերակրում		108	72	2
7	Ձկների հիվանդությունները և դրանց կանխարգելումը		108	72	2
8	Ապրանքային ձկների տոհմային գործ և բռնիտացում		42	28	2
9	Ձկնաբուծական տնտեսություններում կիրառվող սարքավորումները		54	36	2
10	Ապրանքային ձկնաբուծություն		120	80	2
11	Ձկների տեղափոխումը		54	36	2
12	Ձկնային տնտեսության ձկնաբուծական		108	72	2

	աշխատանքների պլանավորումը, կազմակերպումը և իրականացումը				
13	Ապրանքային ձկնատեսակների արդյունավետ համակեցության ձևավորում		54	36	2
14	Ակվարիումների նախագծում, ձևավորում, տեխնիկական հագեցում և շահագործում		120	80	2
15	Ակվարիումային օրգանիզմների սննդառություն		81	54	2
16	Ակվարիումային օրգանիզմների խնամքի և բազմացման տեխնոլոգիա		120	80	2
	ԸՆԴԱՄԵՆԸ		1455	970	
ԸՆՏՐՈՎԻ			108	72	
ՊԱՀՈՒՍԱՅԻՆ ԺԱՄԵՐ			51	34	
	ԸՆԴԱՄԵՆԸ	56	2968	2016	
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ		200	200	
	ՊՐԱԿՏԻԿԱ	22			
	ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ	6			
	ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ	2			
	ԸՆԴԱՄԵՆԸ	86			